

**Աննա Հովհաննիսյան**

*ՀՀ Սահմանադրական դատարանի իրավախորհրդարկական վարչության  
անհատական դիմումների վերլուծության բաժնի առաջատար մասնագետ,  
Եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի հայցորդ  
էլ. հասցե՝ anna.hovhannisyan2210@gmail.com*

DOI: 10.53614/18294952-2023.1-26

## **ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ԱԶԳԱՅԻՆ- ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ**

Սույն հոդվածը նվիրված է անմեղության կանխավարկածի սկզբունքի ամրագրմանը առանձին պետությունների իրավական համակարգերում: Մասնավորապես՝ անդրադարձ է կատարվում անմեղության կանխավարկածի սկզբունքի սահմանադրական ամրագրմանը Ռուսաստանի Դաշնության, Իսպանիայի Թագավորության, Ֆրանսիայի Հանրապետության, մի շարք մուսուլմանական երկրների, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և այլ երկրների օրենսդրություններում: Թեմայի ուսումնասիրության նպատակն է վեր հանել առանձին պետությունների իրավական համակարգերում անմեղության կանխավարկածի սկզբունքի գործողությունը, ուսումնասիրել այդ երկրներում այդ սկզբունքի կիրառելիությունը, վեր հանել այն երկրները, որտեղ անմեղության կանխավարկածի սկզբունքը չի գործում, կատարել համեմատական վերլուծություն և արդյունքում սահմանել անմեղության կանխավարկածի հիմնական էությունը, կիրառման ոլորտը՝ ըստ առանձին պետությունների իրավական համակարգերի: Ուսումնասիրության արդյունքները հնարավորություն կտան առավել մանրամասն պատկերացում կազմել առանձին պետություններում այդ սկզբունքի ամրագրման վերաբերյալ, ին-

չի արդյունքում կկարողանանք վեր հանել առանձին պետություններում դրա վերաբերյալ առկա կարգավորումների թերությունները և առավելությունները և դրանք տեղայնացնել ՀՀ ներպետական իրավական համակարգում:

**Հիմնաբառեր:** Անմեղության կանխավարկած, իրավական համակարգ, արտասահմանյան երկրներ, առանձին պետությունների իրավական համակարգեր:

## Ներածություն

Ինչպես բազմիցս նշվել է, անմեղության կանխավարկածի սկզբունքը միջազգայնորեն ճանաչված սկզբունք է՝ ամրագրված միջազգային կարևորագույն իրավական ակտերում: Այդպիսի միջազգային փաստաթղթեր վավերացրած պետությունները ստանձնում են պարտականություն իրենց ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել այդ փաստաթղթերին: Հետևաբար՝ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ և սահմանել անմեղության կանխավարկածի սկզբունքը, ինչը և արվել է: Սույն հոդվածի շրջանակներում կուսումնասիրենք անմեղության կանխավարկածի սկզբունքի ամրագրումը առանձին պետությունների օրենսդրություններում: Հետազոտման արդյունքում մեր առջև բարձրացված խնդիրները հանգում են հետևյալին.

- վեր հանել այն պետությունները, որտեղ անմեղության կանխավարկածի սկզբունքը չի գործում, հայտնաբերել դրա պատճառները, ուսումնասիրել այն պետությունների շրջանակը, որտեղ անմեղության կանխավարկածի սկզբունքը լայն տարածում ունի,
- վեր հանել այդ սկզբունքի կիրառման ոլորտը, դրա վերաբերյալ կարգավորումներում առկա առավելությունները և թերությունները՝ ելնելով կոնկրետ պետության իրավական համակարգի առանձնահատկություններից, այն համեմատել ՀՀ ներպետական իրավական համակարգում ամրագրված անմեղության կանխավարկածի բովանդակության հետ:

## Մեթոդ

Ուսումնասիրությունն իրականացվել է իրավահամեմատական, վերլուծական, համադրման, ինդուկցիայի և այլ մեթոդների հիման վրա:

## Արդյունքներ

Անմեղության կանխավարկածի սկզբունքը ամրագրված է ժամանակակից գրեթե բոլոր պետությունների իրավական համակարգերում: Ասվածը պայմանավորված է առավելապես այն հանգամանքով, որ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի», Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» վավերացումից հետո բոլոր պետությունները ստանձնում են պար-

տականություն իրենց Սահմանադրություններում մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները ամրագրել առանձին գլխով, որոնցում իր ուրույն տեղը պետք է ունենա անմեղության կանխավարկածը: Այդպիսի պարտավորություն ստանձնած պետություններն իրենց ներպետական օրենսդրությունը համապատասխանեցրել են իրենց կողմից վավերացրած միջազգային փաստաթղթով/փաստաթղթերով սահմանված դրույթներին, սույն պարագայում՝ ամրագրել են անմեղության կանխավարկածի սկզբունքը և դրա տարրերը իրենց օրենսդրություններում և դատավարության ընթացքում ելնում են անձի՝ անմեղության կանխավարկածի սկզբունքից: Հայաստանի Հանրապետությունը ևս վավերացրել է այդ փաստաթղթերը և ներկայումս Սահմանադրության 2-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին, իսկ 66-րդ հոդվածը՝ անմեղության կանխավարկածի սկզբունքին: Այդպիսի պետություններ են նաև օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունը, Ֆրանսիայի Հանրապետությունը, Իսպանիայի Թագավորությունը, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը և այլն:

Այսպես՝ **Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության** 49-րդ հոդվածով սահմանվում է. «1. Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուրը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել դաշնային օրենքով նախատեսված կարգով և հաստատվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: 2. Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: 3. Անձի մեղավորության վերաբերյալ անհարկի կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»: Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքով ևս սահմանվում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Մասնավորապես ՌԴ ՔԴՕ 14-րդ հոդվածով սահմանվում է. «1. Մեղադրյալը համարվում է անմեղ, քանի դեռ հանցանք կատարելու մեջ նրա մեղավորությունը չի ապացուցվել սույն օրենսգրքով նախատեսված կարգով և հաստատվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: 2. Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանությանն ուղղված փաստարկները հերքելու բեռը դրված է մեղադրանքի կողմի վրա: 3. Մեղադրյալի մեղավորության վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող վերացվել սույն օրենսգրքով սահմանված կարգով, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի: 4. Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա» (Уголовно-процессуальный кодекс Российской Федерации, 2001): Համապատասխանաբար ՌԴ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 1.5-րդ հոդվածով ամրագրված է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ իր մեջ ներառելով նաև դրա տարրերը: Հիշյալ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «այն անձը, որի նկատմամբ վարվում է վարչական իրավախախտման գործով վարույթը, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենսգրքով նախատեսված կարգով՝ գործը քննած դատավորի, մարմնի, պաշտոնատար անձի օրինական ուժի մեջ մտած որոշ-

մամբ»: Միաժամանակ, նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանվում են անմեղության կանխավարկածի այնպիսի տարրեր, որպեսզին են՝ վարչական պատասխանատվության ենթակա անձը չպետք է ապացուցի իր անմեղությունը (որոշակի բացառություններով) կամ չփարատված կասկածները լուծվում են հոգուտ վարչական իրավախախտում կատարած անձի և այլն (Кодекс Российской Федерации об административных правонарушениях, 2001): ՌԴ հարկային օրենսգրքի կարգավորումներով ևս նախատեսված է անմեղության կանխավարկածի վերաբերյալ դրույթներ, մասնավորապես, նույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ. «Անձը համարվում է անմեղ հարկային իրավախախտման համար, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել դաշնային օրենքով նախատեսված կարգով: Պատասխանատվության ենթարկվող անձը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը հարկային իրավախախտման կատարման մեջ: Հարկային իրավախախտման փաստը և դրա կատարման մեջ անձի մեղավորությունը վկայող հանգամանքների ապացուցման պարտականությունը դրվում է հարկային մարմինների վրա: Պատասխանատվության ենթարկվող անձի մեղավորության կասկածները մեկնաբանվում են հոգուտ այդ անձի» (Налоговый кодекс Российской Федерации, 1988):

Անդրադառնալով **Իսպանիայի Թագավորությանը**, որը Եվրոպական անվտանգության և մարդու իրավունքների ու ազատությունների ապահովման համակարգի մեջ մտնող, մարդու իրավունքների մասին Եվրոպական կոնվենցիաների մասնակից պետությունների շարքին է դասվում, անհրաժեշտ է նկատել, որ Սահմանադրության մեջ քաղաքացիների իրավունքներին, ազատություններին և պարտականություններին նվիրված են զգալի թվով հոդվածներ, մասնավորապես, անձի իրավունքների դատական պաշտպանությունը սահմանված է Իսպանիայի Սահմանադրության 24-րդ հոդվածով: Այսպես, տվյալ հոդվածի 1-ին մասով նախատեսված է քաղաքացիների օրինական իրավունքներն ու շահերը դատարանի կողմից արդյունավետ պաշտպանելու իրավունքը, ընդ որում նման պաշտպանության մերժում չի թույլատրվում: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Հավասարապես յուրաքանչյուր ոք կարող է դատվել միայն օրենքով սահմանված դատարանի կողմից, ունենալ պաշտպանություն և փաստաբանական օգնությունից օգտվելու իրավունք, առաջադրված մեղադրանքների մասին իմանալու իրավունք, ունենալ բոլոր երաշխիքների պահպանմամբ սահմանված ժամկետներում իրականացվող բաց դատաքնության իրավունք, իր պաշտպանության բոլոր միջոցներից օգտվելու իրավունք, իր դեմ ցուցմունք չտալու, իրեն մեղավոր չճանաչելու իրավունք, անմեղության կանխավարկածի իրավունք» (Конституция Королевства Испании, 1978): Հիշյալ կարգավորումների բովանդակությունից բխում է, որ անմեղության կանխավարկածը չի բացահայտվում ոչ Սահմանադրությամբ, ոչ էլ քրեական օրենսդրությամբ: Անմեղության կանխավարկածը մասամբ բնութագրել է Իսպանիայի Սահմանադրական դատարանը 06.07.1995թ. թիվ 128 որոշման մեջ, որում նշել է այդ հասկացության երկակի բնույթը և այն սահմանել է ոչ միայն որպես դատավարական

կանոն, այլև որպես ենթադրյալ հանցագործի նկատմամբ հարգալից վերաբերմունքի կանոն, այսինքն՝ իսպանացի իրավաբանների հասկացության մեջ անմեղության կանխավարկածը անխզելիորեն կապված է անձի և նրա արժանիքների նկատմամբ հարգանքի սկզբունքի հետ (STC 128/1995 de 26 de julio): Չնայած այս պետությունը հստակ չի ամրագրում անմեղության կանխավարկածի սկզբունքը, այնուամենայնիվ այն կիրառվում է դատավարության ընթացքում: Այսպես՝ 1981թ. հունիսի 11-ին Իսպանիան ձանաչել է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պարտադիր իրավասությունը: Հետևաբար, իսպանացիները կարող են իրենց պետության նկատմամբ հայց ներկայացնել 1950թ.-ի Կոնվենցիայում ամրագրված իրավունքների և ազատությունների խախտումների, դրան կից լրացուցիչ արձանագրությունների վերաբերյալ, ինչը հաստատվում է Իսպանիայի նկատմամբ ընդունված Եվրոպական դատարանի բազմաթիվ բողոքներով և նախադեպերով:

Ապացուցման բեռի տեսանկյունից այս պետությունում կանխավարկածն ակնհայտորեն համարվում է իրավական և կարող է հաղթահարվել միայն մեղադրող բնույթի ապացույցներ ձեռք բերելու միջոցով՝ անհրաժեշտ դատավարական երաշխիքներին համապատասխան: Ընդ որում՝ այստեղ, անմեղության կանխավարկածի սկզբունքից ելնելով, ապացուցման բեռն ընկնում է մեղադրանքի կողմի վրա (Vallejo, 2002, էջ 10) այնպես, ինչպես Հայաստանի Հանրապետությունում: Իսպանիայի Սահմանադրական դատարանի համաձայն՝ անմեղության կանխավարկածը, որպես ապացուցման կանոն, ենթադրում է, որ ապացուցման բեռն ընկնում է բացառապես մեղադրանքի կողմի վրա (Carballo Armas, 2004, էջ 109):

Իսպանիայում անմեղության կանխավարկածի վրա ազդում է, մի կողմից, դատավորների կողմից ապացույցների ազատ գնահատման սկզբունքը (Իսպանիայի Սահմանադրության 117.3-րդ հոդված և քրեական օրենսգրքի 741-րդ հոդված), մյուս կողմից, «*mínima actividad probatoria*» սկզբունքը, որը հարմար է անմեղության կանխավարկածը հաղթահարելու համար և իրականացվում է սահմանադրական և արդար դատավարական երաշխիքների մանրակրկիտ պահպանմամբ (Իսպանիայի Սահմանադրական դատարանի 1981 թվականի հուլիսի 22-ի թիվ 84/1981 որոշում):

**Ֆրանսիայի Հանրապետությունում** անմեղության կանխավարկածը, առաջին հերթին, ամրագրված է 1789 թվականի Մարդու իրավունքների հռչակագրում: Վերջինս սահմանադրական նշանակություն ունի, քանի որ դրա մասին խոսվում է Սահմանադրության Պրեամբուլայում: Անմեղության կանխավարկածը այս պետությունում իր ամրագրումն է ստացել նաև քրեական դատավարության օրենսդրությամբ (Criminal Procedure Code of the French Republic, 1958). Այսպես՝ ցանկացած կասկածյալ կամ հետապնդվող համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքը չի հաստատվել: Նրա անմեղության կանխավարկածի խախտումները հայտնաբերվում, կանխվում և ուղղվում են օրենքով նախատեսված պայմաններում: Ընդ որում՝ Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսդրությունում այդ դրույթը լրացվել է անմեղության

կանխավարկածի և տուժողների իրավունքների պաշտպանության ուժեղացման մասին օրենքով (Закон об усилении защиты презумпции невиновности и прав потерпевших, 2000): Ֆրանսիայում անմեղության կանխավարկածի սկզբունքին առանձնակի կարևորություն է տրվում և նույնիսկ երդվյալ ատենակալները իրենց երդման ժամանակ երդվում և խոստանում են հիշել, որ մեղադրյալը համարվում է անմեղ և, որ բոլոր կասկածները պետք է լուծվեն հօգուտ մեղադրյալի: Այստեղ անմեղության կանխավարկածի սկզբունքն առկա է նաև քաղաքացիական օրենսգրքում, մասնավորապես՝ օրենսգրքի 9-1-րդ հոդվածով սահմանվում է. «Յուրաքանչյուր ոք ունի անմեղության կանխավարկածը հարգելու իրավունք» (Гражданский кодекс Французской Республики, 1804): Սակայն անմեղության կանխավարկածը, մեր կարծիքով, պետք է կիրառվի հանրային պատասխանատվության ոլորտներում, որտեղ կողմերից մեկը պետությունն է՝ հանձինս իր պետական մարմինների, իսկ քաղաքացիական իրավունքում դրան հակառակ կիրառելի է մեղավորության կանխավարկածը: Ֆրանսիան նույնպես, չնայած քաղաքացիական օրենսգրքով անմեղության կանխավարկածի ամրագրմանը, չի կիրառում անմեղության կանխավարկածը քաղաքացիական օրենսդրությամբ: Անմեղության կանխավարկածի ամրագրման հիմնական պատճառն այն է, որ օրենսդիրը ցանկացել է անմեղության կանխավարկածի իրավունքը պաշտպանել տարատեսակ ոտնձգություններից (հիմնականում մամուլի ոտնձգություններից) ոչ միայն քրեական դատավարության նորմերի, այլ նաև քաղաքացիաիրավական պատժամիջոցների միջոցով, որոնք ավելացվում են գրպարտության համար քրեաիրավական պատժամիջոցներին (François, Fenouillet, 1996, էջ 85): Այսինքն՝ Ֆրանսիայում ևս անմեղության կանխավարկածը չի կիրառվում քաղաքացիական դատավարությունում, սակայն այդ սկզբունքի կարևորությամբ պայմանավորված դրա խախտման համար պատասխանատվություն է նախատեսված ոչ միայն քրեական օրենսդրությամբ, այլև քաղաքացիական:

Ֆրանսիայում ևս, ելնելով անմեղության կանխավարկածի սկզբունքից, ապացուցման բեռն ընկնում է մեղադրանքի կողմի վրա, որը տրամադրում է կատարված քրեական իրավախախտման վերաբերյալ ապացույցներ, որպեսզի հաստատի բոլոր այն տարրերը, որոնք սահմանում են խախտումը և անարդարության ենթակա բոլոր տարրերի բացակայությունը (Кассационный суд Франции, уголовная палата, 24.03.1949, бюллетень решений кассационного суда): Ֆրանսիայում մեղադրող կողմը պետք է ներկայացնի ինչպես նյութական վնասի ապացույցներ, այնպես էլ կասկածյալի մեղավորության ապացույցներ:

Հարկ է նշել, որ Ֆրանսիայի իրավական համակարգում կան այնպիսի նորմեր, հանցակազմեր, որոնք բացառում են դրանց վրա անմեղության կանխավարկածի տարածումը և ապացուցման բեռը մեղադրանքի կողմի վրա ընկնելը: Այսպես՝ մարմնավաճառության օժանդակության մասով պատիժ է նախատեսվում նաև նրանց համար, ովքեր չեն կարող բացատրել, թե ինչ ռեսուրսներ են օգտագործում իրենց ապրելակերպը պահպանելու համար, եթե նրանք ապրում են կամ սովորական հարաբերություններ ունեն մարմ-

նավաճառությանը զբաղվող մեկ կամ մի քանի մարդկանց հետ (Ouvrard, 2000): Մեկ այլ հանցակազմ կա՝ քրեական օրենսգրքի 321–6–րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը, որը պատասխանատվություն է նախատեսում նրանց համար, ովքեր չեն կարող արդարացնել իրենց ապրելակերպին համապատասխան ռեսուրսները, կամ ի վիճակի չեն ապացուցել իրենց ունեցվածքի ծագումը, եթե նրանք սովորական հարաբերություններ ունեն հանցագործություններ կատարող մեկ կամ մի քանի անձանց հետ, որոնք պատժվում են առնվազն հինգ տարի ազատազրկմամբ (Daury–Fauveau, 2010):

Բացի այդ՝ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը, անդրադառնալով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տուգանք նշանակելու դեպքերին, նշել է, որ կանխավարկածը չի կարող բացարձակ լինել, և որ ամեն դեպքում օրենքը պետք է երաշխավորի պաշտպանության իրավունքները (Resolution of the Constitutional Council of France No. 99–411, 16.06.1999):

Այսպիսով՝ Ֆրանսիայի Հանրապետությունը ևս ճանաչում և երաշխավորում է անձի անմեղության կանխավարկածը, սակայն օրենսդրությանը հայտնի են այնպիսի դեպքեր, երբ անմեղության կանխավարկածը չի գործում՝ ելնելով կոնկրետ հանցակազմի տեսակից և բնույթից: Ընդ որում՝ այս երկրում քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված է պատասխանատվություն անմեղության կանխավարկածի սկզբունքի չպահպանման համար:

Ի տարբերություն վերոգրյալ պետությունների **Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում** անմեղության կանխավարկածի վերաբերյալ օրենսդրի որդեգրած քաղաքականությունը էականորեն տարբերվում է թե՛ ՀՀ–ի և թե՛ ուսումնասիրված մյուս պետությունների քաղաքականությունից: Ներկայումս Չինաստանի Սահմանադրության 2–րդ գլուխը ամբողջությամբ նվիրված է քաղաքացիների հիմնական իրավունքներին և ազատություններին, սակայն չկա որևէ դրույթ անմեղության կանխավարկածի մասին (Конституция КНР, 1982): Պատճառը կայանում է նրանում, որ ԶԺՀ–ում այն այլևս չի գործում սկսած 2004 թվականի սկզբից: Հարկ ենք համարում նշել, որ 2002թ. ապրիլի 1–ից Չինաստանի դատարանների մեծ մասում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Գերագույն դատարանի որոշմամբ չեղյալ է հայտարարվել անմեղության կանխավարկածի հիմնարար դատական սկզբունքը, որի համաձայն ամբաստանյալն անմեղ է համարվում այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքով նախատեսված կարգով և հաստատվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան դատավճռով: ԶԺՀ–ի Գերագույն դատարանը վճռել է, որ այժմ բոլոր մեղադրյալները, որոնք անցնում են այնպիսի գործերով, ինչպիսիք են բժշկական հանցագործությունները, արտոնագրային իրավունքի խախտումները, շրջակա միջավայրի աղտոտումը, մարդկանց և ընտանի կենդանիների վրա հարձակումները, պետք է դատարանին ապացուցեն իրենց անմեղությունը, հակառակ դեպքում նրանք մեղավոր կձանաչվեն: Չինացի իրավաբանները միաձայն պաշտպանում են երկրի Գերագույն դատարանի նոր որոշումը (В Китае отменена презумпция невиновности, 2002):

2005թ. մայիսի 23-ի նիստում Չինաստանի Գերագույն դատարանը նաև թույլատրել է որպես ապացույց օգտագործել այն ձայնագրությունները և տեսագրությունները, որոնք արվել են առանց մեղադրյալի իմացության, այդ թվում նրանք, որոնք ստացվել են անօրինական ձանապարհով (Доклад специалистов о ситуации прав и свобод человека в Китае для Совета Европы, 1999, էջ 26): Սակայն նման մոտեցումը ի սկզբանե քննադատվել է միջազգային կազմակերպությունների կողմից, որոնք մշտապես քննադատել են նաև ԶԺՀ-ի կողմից մահապատիժների չարաշահումը (Rolholm, 1996, էջ 178): Իսկ Չինաստանն արդարանում է նրանով, որ իր արդարադատությունն Ասիական մշակույթի մի մասն է և պետք է լինի ինքնատիպ:

Միաժամանակ, կան շատ պետություններ, որտեղ հետազոտման առարկա խնդրի կապակցությամբ առկա են այլ մոտեցումներ ոչ միայն մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության իրավական դրույթների կանոնակարգման (Бутрос-Гали, 1995, էջ 10-11), այլև իրավական կատեգորիաների, դրանց իրականացման միջոցների և մեթոդների ըմբռնման և ամրապնդման հետ կապված (Cyprus v. Turkey, 4 Eur. H. R. Rep. 482, 537 (1982)): Վերոգրյալը հիմնականում վերաբերվում է *մուսուլմանական երկրներին*, որոնց իրավական համակարգը աչքի է ընկնում իր ինքնատիպությամբ: Ուստի, անհրաժեշտ է անդրադառնալ նաև այդպիսի պետություններին, նրանց իրավական համակարգին և անմեղության կանխավարկածի սկզբունքի ամրագրմանը այդ պետությունների իրավական համակարգում:

Մուսուլմանական երկրներում իրավունքի աղբյուր են համարվում Ղուրանը և Սուննան: Չնայած իր ժամանակակից տեսքով մուսուլմանական իրավունքը զգալի ազդեցության է ենթարկվում համամարդկային նորմերից և սկզբունքներից, սակայն այնտեղ գործում են նաև Ղուրանի, Սուննայի, Շարիաթի հատուկ կարգադրություններ, որոնք իրավական աղբյուրների հիերարխիայում համարվում են աշխարհիկ օրենքների վերևում կանգնած: Դա հատկապես հստակ արտահայտություն է ստացել այն երկրներում, որտեղ կիրառվում է ավանդական (դասական) Մահմեդական իրավունքը (Իրան, Կատար, Օման, ԱՄԷ, Սաուդյան Արաբիա և այլն) (Абдалати, 1995, էջ 52): Այսպես, ըստ Ղուրանի, «... մարդը, ծնվելով, գտնվում է նախնական մաքրության վիճակում, կամ «ֆիտրա»-ում, ինչը նշանակում է «Իսլամ», կամ «հնազանդություն Ալլահի կամքին և օրենքին»» (Коран, 1990, էջ 30): Համուդ Աբդալաթին նշում է, որ «սկզբնական մեղքի կամ ժառանգած մեղավորության գաղափարը տեղ չունի իսլամի վարդապետության մեջ» (Абдалати, 1995, էջ 52), իսկ դրա հետ կապված մարդն ավելի հակված է բարու, քան չարի, իսկ դրա հետ կապված նա ի սկզբանե բարեխիղճ է, թեև, որպես էակ, հեռու է անկատարությունից, նա կարող է սխալներ գործել և նույնիսկ կարող է մեղք գործել (Мисроков, 2002, էջ 33-34):

Վերոգրյալի կապակցությամբ իրավացիորեն նշվում է, որ Իսլամական օրենսդրությունում հիմնական կանոն է համարվում հետևյալ դիրքորոշումը. մուսուլմանների գործողություններում միշտ ենթադրվում է բարեխիղճություն (իրավացիություն), քանի դեռ մյուսը, այսինքն՝ հակառակը չի հայտնաբերվել,



հրապարակվել և պատշաճ կերպով ապացուցվել դատարանում (Сюкияйнен, 2001, էջ 328): «Հիմնվելով այս որոշման վրա՝ դատավորը չի ենթադրում ոչ կեղծիք, ոչ դիտավորություն, ոչ մեղավորություն որևէ գործողության մեջ՝ առանց իրեղեն ապացույցների և ցուցմունքների վրա հիմնված ապացույցներ ներկայացնելու: (...)» (Мушкян, 1997, էջ 48):

Այսպիսով, Իսլամը հաստատել է անմեղության կանխավարկածը Արևմտյան երկրների օրենսդրությունում հաստատվելուց դեռևս 11 դար առաջ: Իսլամական իրավագիտության հիմքում ընկած է անմեղության կանխավարկածի սկզբունքը, որը նշանակում է, որ մարդը կարող է մեղավոր ճանաչվել միայն այն ժամանակ, երբ առկա են նրա կողմից հանցագործություն կատարելու անհերքելի ապացույցներ: Սակայն կան հանգամանքներ, որոնց դեպքում մարդը կասկածի տակ է ընկնում, չնայած որ նրա մեղքը դեռ ապացուցված չէ: Նման մարդը կասկածելի մեղադրյալ է, իսկ արաբերենով հնչում է «մուտահան», ինչը «թուխմահ» կամ «թուխամահ» բառն է, որը նշանակում է «կասկած» (Абдалати, 1995, էջ 55): Սակայն, քանի որ տվյալ անձի մասին կասկածներ կան, ուստի պետք է մտածել հանրությանը պաշտպանելու մասին՝ միաժամանակ չվերաբերվելով իր հետ որպես հանցագործի: Իսլամում կան երեք կատեգորիաների պատկանող անձինք և հենց այդ կատեգորիաներով էլ որոշվում է թե ինչպես պետք է վերաբերվել տվյալ անձին: Առաջին կատեգորիային են պատկանում այն անձինք, ովքեր լավ հայտնի են իրենց աստվածավախությամբ, ուստի նրանք դժվար թե հանցագործություն կատարեն: Երկրորդ կատեգորիան նրանք են, ովքեր հայտնի են իրենց ազատ կենսակերպով, իսկ երրորդը՝ մարդիկ են, որոնց մասին բավարար տեղեկատվություն չկա որևէ գնահատական տալու համար (Алексеев, 2002, էջ 29–30): Առաջին կատեգորիային պատկանող անձանց մեղադրելու համար անհրաժեշտ են ծանրակշիռ ապացույցներ: Երկրորդ և երրորդ կատեգորիայի անձանց դեպքում ևս առանց ապացույցների մեղքը հաստատված չի կարելի համարել, սակայն ապացույցներ հավաքելու համար նրանց կարելի է բանտարկել: Ընդ որում՝ մեղադրյալը պետք է ստանա անհրաժեշտ սնունդ, հագուստ, ինչպես նաև բժշկական օգնություն: Դա իրականացվում է հասարակության հաշվին: Մեղադրյալի տունը պետք է լինի նույնքան անձեռնմխելի, որքան ցանկացած այլ մարդու տունը, որը երաշխավորվում է Սահմանադրությամբ: Բացի այդ բոլոր կատեգորիաներին պատկանող անձանց մեղավորության վերաբերյալ ապացույցները չի կարելի ստանալ՝ խախտելով նրա իրավունքները (օրինակ՝ հետևելով նրան, կազմակերպելով տեսագրություն կամ ձայնագրություն, նրա տանը չթույլատրված խուզարկություն կազմակերպելով), քանի որ Սուրբ Դուրանում ասվում է. «...մի հետևեք, և թող ձեզանից ոմանք հայիոյեն ուրիշների աչքերի համար» (Коран, 1990, էջ 964): Շարիաթի համաձայն՝ մեղադրյալն ունի պաշտպանության իրավունք, այսինքն՝ կարող է բերել իր անմեղությունն ապացուցող կամ նրա դեմ ցանկացած մեղադրանք հերքող փաստարկներ, բայց նա չպետք է ապացուցի իր անմեղությունը: Ավելին, մեղադրյալին իր օգտին արտահայտվելու, ներկայացուցիչ ունենալու հնարավորություն տալը հասարակության և պետությո-

յան պարտականությունն է (Абдалати, 1995, էջ 83-84):

Հարկ է ներկայացնել ևս մի քանի պետություններ, որոնց օրենսդրությամբ ևս սահմանվում է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ որպես հիմնարար իրավունք: Այսպես՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանվում է. «Ոչ ոքի հանդեպ չվերաբերվել ինչպես հանցագործության մեղավորի, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել և հաստատվել դատարանի կամ արդարադատության հանրային մարմնի օրինական ուժի մեջ մտած դատավճռով, որը կայացվել է օրենքի պահանջներին համապատասխան իրականացված դատավարության արդյունքում» (Свод законодательства ФРГ, 1999, էջ 435): Գերմանիայում անմեղության կանխավարկածը անուղղակիորեն բխում է սահմանադրական պետության սկզբունքներից:

Ինչ վերաբերում է ապացուցման ընթացակարգին, ապա այստեղ գործում է հետաքննության սկզբունքը, որը դատավորին թույլ է տալիս համոզվել ռացիոնալության որոշակի սահմաններում՝ կապ չունենալով ստացված հայտարարությունների հետ (Juy-Burmant, 2001): Մյուս կողմից, համարվում է, որ դատավորը, ամբաստանյալին դատապարտելու համար, ապացույցների ազատ գնահատման սկզբունքի համաձայն, պետք է համոզված լինի առանց որևէ կասկածի, քանի որ վերջինս հոգուտ ամբաստանյալի է (Крэй, 2007): Հետևաբար՝ այստեղ ապացուցման բեռը ոչ միայն ընկած է մեղադրանքի կողմի վրա, այլև՝ դատարանի, քանի որ տվյալ երկրում դատարանները կաշկանդված չեն գործում առկա ապացույցներով և նրանք առաջնորդվում են ճշմարտությունը փնտրելու սկզբունքով:

Չեխիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով ևս սահմանվում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Այսպես՝ ըստ Չեխիայի քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի՝ քանի դեռ օրինական ուժի մեջ մտած դատավճռով չի հաստատվել այն անձի մեղավորությունը կատարված հանցագործության մեջ, ում նկատմամբ դատավարություն է իրականացվում, նրան չի կարելի համարել մեղավոր (Criminal Procedure Code of the Czech Republic):

Անմեղության կանխավարկածի սկզբունքն ամրագրված է նաև Լեհաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում, համաձայն դրա 5-րդ հոդվածի՝ մեղադրյալը չի համարվում մեղավոր, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով նախատեսված կարգով (Уголовно-процессуальный кодекс Республики Польша):

## Քննարկում

Ակնհայտ է, որ ժամանակակից գրեթե բոլոր պետություններում գործում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Ուսումնասիրված պետություններից միայն ՉԺՀ-ն է, որտեղ բացարձակապես չի գործում անմեղության կանխավարկածը, և դրան ի հակադրություն գործում է մեղավորության կանխավարկածը: Կարծում ենք, որ Չինաստանի կողմից որդեգրված այդպիսի քաղաքականությունը առանձնանում է իր ինքնատիպությամբ, հաշվի առ-

ներով այդ երկրում քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ կապված իրական խնդիրների լուծման առանձնահատկությունները:

Հետաքրքրական է նաև մուսուլմանական երկրների մոտեցումը, որտեղ անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառվում է ինքնատիպ եղանակով: Մասնավորապես՝ ի տարբերություն Հայաստանի Հանրապետության և ուսումնասիրված մյուս պետությունների, այստեղ անմեղության կանխավարկածի սկզբունքը հավասարապես չի վերաբերում բոլոր անձանց, այլ որոշակի աստիճաններով է գործում: Վերջինս իրենից ենթադրում է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը տարբեր կատեգորիաների անձանց նկատմամբ կիրառվում է տարբեր կերպ, ինչը, մեր կարծիքով, ընդունելի չէ Հայաստանի Հանրապետության համար, քանի որ չի բխում իրավահավասարության սկզբունքից:

Ուսումնասիրված մյուս բոլոր պետություններում անմեղության կանխավարկածի սկզբունքը ամրագրված է միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ պետությունների որդեգրած քաղաքականությունը առավել մոտ է Հայաստանի Հանրապետության որդեգրած քաղաքականությանը: Մասնավորապես՝ գրեթե բոլոր երկրներում անմեղության կանխավարկածը առաջին հերթին ամրագրված է տվյալ երկրում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտերում: Այսպես՝ Ռուսաստանի Դաշնությունում այն ամրագրված է, առաջին հերթին, ՌԴ Սահմանադրությամբ, Ֆրանսիայում՝ սահմանադրական նշանակություն ունեցող Մարդու իրավունքների հռչակագրում: Հայաստանի Հանրապետությունում անմեղության կանխավարկածի սկզբունքը ևս, առաջին հերթին ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ: Սակայն, օրինակ, Իսպանիայի Թագավորությունում անմեղության կանխավարկածի սկզբունքը բացահայտված չէ Սահմանադրությամբ, սակայն միևնույնն է այն կիրառվում է:

Անդրադառնալով անմեղության կանխավարկածի սկզբունքի առկայության պարագայում ապացուցման բեռի բաշխման հարցին, հարկ ենք համարում արձանագրել, որ ուսումնասիրված գրեթե բոլոր պետություններում այդ բեռը դրված է մեղադրանքի կողմի վրա: Այսպես՝ օրինակ՝ Ֆրանսիայի Հանրապետությունում, Իսպանիայի Թագավորությունում անձի՝ իրավախախտման կատարման մեջ մեղավորությունը ապացուցելու պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը, սակայն օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում բացի մեղադրանքի կողմից, ապացուցման բեռն ընկած է նաև դատարանների վրա, քանի որ տվյալ երկրում դատարանները հանդես են գալիս հօգուտ մեղադրյալի և կաշկանդված չեն գործում առկա ապացույցներով: Գտնում ենք, որ նման մոտեցումը արդարացված չէ, քանի որ դատարանները պետք է հանդես գան որպես անկախ, անկողմնակալ և անաչառ մարմին և չպետք է կաշկանդված լինեն դատավարության մասնակիցներով: Այս համատեքստում Ֆրանսիայի Հանրապետության և Իսպանիայի Թագավորության իրավակարգավորումները նույնանում են ՀՀ-ում գործող իրավակարգավորումների հետ, քանի որ երեք պետություններում էլ ապա-

ցուցման բեռն ընկած է մեղադրանքի կողմի վրա: Սակայն մեզ համար առավել ընդունելի է Գերմանիայի Դաշնային Հանրապետության այն մոտեցումը, համաձայն որի՝ դատարանները կաշկանդված չեն գործում առկա ապացույցներով և ինքնուրույն կարող են հավաքել ապացույցներ:

Հետաքրքրական է նաև Ֆրանսիայում առկա այն իրավակարգավորումը, համաձայն որի՝ կան այնպիսի իրավախախտումներ, հանցակազմեր, որոնց դեպքում չի գործում անմեղության կանխավարկածը և հանցավորը հենց ինքը պետք է ապացուցի իր անմեղությունը: Այս առումով Ֆրանսիայի քաղաքականությունը տարբերվում է Հայաստանի Հանրապետության քաղաքականությունից, քանի որ ՀՀ-ում անմեղության կանխավարկածի սկզբունքը քրեական դատավարությամբ ամրագրված բացարձակ սկզբունք է, որը տարածվում է քրեաիրավական բոլոր հանցակազմերի վրա:

Պետությունների մեծ մասում անմեղության կանխավարկածի սկզբունքը դասվում է ճյուղային սկզբունքների շարքին և կիրառվում է քրեադատավարական ոլորտում: Հայաստանի Հանրապետությունում ևս ներկայումս անմեղության կանխավարկածը հանդիսանում է քրեադատավարական սկզբունք: Սակայն, օրինակ, Ֆրանսիայի Հանրապետությունում անմեղության կանխավարկածի սկզբունքը ամրագրված է նաև քաղաքացիական օրենսգրքով, բայցևայնպես այն չի կիրառվում տվյալ ոլորտում, քանի որ տվյալ երկրում քաղաքացիաիրավական ոլորտում կիրառվում է մեղավորության կանխավարկածը: Իսկ քաղաքացիական օրենսգրքում տվյալ սկզբունքի ամրագրումը պայմանավորված է հետևյալով. անձը, ում անմեղության կանխավարկածը ոտնահարվել է կարող է դիմել դատարան՝ տվյալ իրավունքի պաշտպանության համար քաղաքացիաիրավական պատժամիջոցների միջոցով:

Վերոգրյալ հարցի շուրջ անհրաժեշտ է նկատել, որ առավել ընդունելի է Ռուսաստանի Դաշնության քաղաքականությունը: Տվյալ պետությունում անմեղության կանխավարկածն իր ամրագրումն է ստացել ոչ միայն Սահմանադրությամբ և քրեական դատավարության օրենսգրքով, այլև մի շարք այլ օրենքներով, ինչպիսիք են՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, Հարկային օրենսգիրքը: Այսինքն՝ ՌԴ-ում անմեղության կանխավարկածը կիրառվում է ոչ միայն քրեական դատավարությունում մեղադրյալի նկատմամբ, այլև հանրային իրավական պատասխանատվության այլ տեսակներում ևս իրավախախտի նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա՝ արդարացված է այն մոտեցումը, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի նեղ մեկնաբանությունից անհրաժեշտ է դուրս գալ՝ դրա կիրառման ոլորտը տարածելով հանրային իրավական պատասխանատվության այլ ոլորտների վրա ևս:

Այստեղից գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում ևս անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է կիրառվի հանրային պատասխանատվության բոլոր ոլորտներում:

Ուստի, գտնում ենք, որ Սահմանադրության 66-րդ հոդվածով սահմանված «հանցագործության համար մեղադրվողը» բառակապակցությունը էականորեն նեղացնում է այդ հոդվածի կիրառման ոլորտը՝ սահմանափակվել:

լով միայն քրեախրավական և քրեադատավարական ոլորտներով: Վերոգրյալի կապակցությամբ առաջարկում ենք այդ սկզբունքի կիրառման ոլորտի լայնացումը առաջին հերթին սահմանել հենց ՀՀ Սահմանադրությամբ, ինչը նշանակում է, որ Սահմանադրության 66-րդ հոդվածով սահմանված «հանցագործության համար մեղադրվողը» բառակապակցությունն անհրաժեշտ է փոխարինել «հանրային իրավական պատասխանատվության ենթակա անձը» բառակապակցությամբ:

### **Եզրակացություն**

Այսպիսով՝ վերոգրյալ ուսումնասիրությունները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները՝

1. գրեթե բոլոր երկրների օրենսդրությունները նախատեսում են անմեղության կանխավարկածի սկզբունքը և որը հանդիսանում է քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկը: Հետևաբար՝ ներկայիս քաղաքակիրթ աշխարհում քրեական դատավարության ընթացքում գրեթե բոլոր պետությունները ելնում են անձի անմեղության կանխավարկածից, քանի դեռ օրենքով սահմանված կարգով հակառակը չի ապացուցվել: Մեր կողմից ուսումնասիրված պետություններից բացառություն է կազմում միայն ՉԺՀ-ն, որտեղ ի հակադրություն մյուս պետությունների կիրառելի է անձի մեղավորության կանխավարկածը:

2. Բայցևայնպես, խոսք չի կարող լինել անմեղության կանխավարկածի սկզբունքի մեկ միասնական ընկալման մասին, քանի որ ներկայումս դեռևս հնարավոր չէ հասնել միասնական իրավական տարածքում բոլոր օրենքների համընկմանը: Վերջինս հիմնականում կախված է տվյալ երկրին բնորոշ մի շարք գործոններից, ինչպիսիք են՝ տնտեսության զարգացման մակարդակը, բնակչության ազգային կազմը, մշակութային ավանդույթները, զարգացման պատմական առանձնահատկությունները և այլ հանգամանքներ:

3. Սակայն պետությունների կողմից «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի», Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» և այլ միջազգային փաստաթղթերի վավերացմամբ ստանձնած միջազգային պարտավորությունները (մասնավորապես, իրենց ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել իրենց կողմից վավերացված միջազգային պայմանագրի դրույթներին, սույն պարագայում՝ իրենց Սահմանադրություններում մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները ամրագրել առանձին գլխով, որոնցում իր ուրույն տեղը պետք է ունենա անմեղության կանխավարկածը) թույլ են տալիս նշել մեկ միասնական իրավական համակարգ ստեղծելու առաջընթացի մասին: Վերոգրյալը հաջողությամբ ստեղծվում է հատկապես եվրոպական տարածաշրջանային մի շարք կազմակերպությունների շրջանակներում, որտեղ իրավական նորմերի և սկզբունքների մերձեցումը տեղի է ունենում իրավունքի շատ ձյուղերում, և նման մերձեցման հիմքը մարդու իրավունքներն են, որոնք առավել հաջողությամբ զարգանում են Եվրոպայի Խորհրդի շրջանակներում պետություն-

ների համագործակցությամբ (Bayles M. D. Principles of law. A normative analysis, Law and philosophy library, 1987 – էջ 178):

4. Առաջարկվում է դուրս գալ անմեղության կանխավարկածի մեկնաբանության նեղ շրջանակներից և վերջինիս գործողությունը տարածել հանրային իրավական պատասխանատվության այլ ոլորտներում ևս: Այդ կապակցությամբ առաջարկվում ենք առաջին հերթին փոփոխություն մտցնել ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածում առկա իրավակարգավորման մեջ: Մասնավորապես՝ առաջարկվում է Սահմանադրության 66-րդ հոդվածով սահմանված «հանցագործության համար մեղադրվողը» բառակապակցությունը փոխարինել «հանրային իրավական պատասխանատվության ենթակա անձը» բառակապակցությամբ:

### Օգտագործված գրականության ցանկ

*Իսլամի համայնքային իրավունքի 1981 թվականի հուլիսի 22-ի թիվ 84/1981 որոշում:*

Абдалати, Х. (1995). *Взгляд на ислам.* / пер. С.И. Жемкова. Новосибирск

Алексеев, И.Л. (2002). Некоторые особенности исторической эволюции и политико-правового ислама и мусульман в Российской империи к XIX – началу XXв.: К вопросу о взаимовлиянии цивилизационных логик в российской истории // *Религиоведение*, Санкт-Петербург, № 2, էջ 29–30:

Бутрос-Гали, Б. (1995). *Организация Объединенных Наций и права человека*, Москва, информационный центр ООН, էջ 10–11:

*В Китае отменена презумпция невиновности*, վերցված է rbc.ru կայքից/ <https://www.rbc.ru/society/03/04/2002/5703b9e79a7947afa08c6dbc> (մուտք՝ 10.05.2023)

*Гражданский кодекс Французской Республики*, Кодекс Наполеона, 21.03.1804.

*Доклад специалистов о ситуации прав и свобод человека в Китае для Совета Европы*, ЕС/CN.9/1999/PC/3/Dir. 83, էջ 26:

*Закон об усилении защиты презумпции невиновности и прав потерпевших*, Закон № 2000–516, Франция, 15.06.2000:

Кассационный суд Франции, уголовная палата, 24.03.194. *Бюллетень решений кассационного суда.*

*Кодекс Российской Федерации об административных правонарушениях*, 20.12.2001 <https://docs.cntd.ru/document/901807667>

*Конституция КНР* (В редакции 2018г.) 04.12.1982 [https://chinalaw.center/constitutional\\_law/china\\_constitution\\_revised\\_2018\\_russian/](https://chinalaw.center/constitutional_law/china_constitution_revised_2018_russian/)

*Конституция Королевства Испании* (1978). Посольство Испании в Российской Федерации <http://vivovoco.astronet.ru/VV/LAW/SPAIN.HTM>

*Конституция РФ*, 12.12.1993 <http://www.constitution.ru/>

*Коран* (1990), Москва, էջ 30:

Крэй, В. (2007). *Социальная Психология*. Немецкое уголовно–процессуальное право. Основные слушания, право доказывания, судебные решения, понятие дела, юридическая сила и средства правовой защиты. Штутгарт:

Мисроков, З. (2002). Особенности формирования уголовно–правовой политики на

- Северном Кавказе//*Законность*. Москва, № 10, էջ 33–34:
- Мушкян, С.В. (1997). Мысли, мысли, мысли... // *Мысль*. № 6, էջ 48:
- Налоговый кодекс Российской Федерации, 16.07.1988* [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_19671/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_19671/) :
- Свод законодательства ФРГ* (1999). Москва, Наука, էջ 435:
- Сюкияйнен, Л. (2001). Шариатское правосудие. *Теоретические основы и практика*. էջ 328:
- Уголовно-процессуальный кодекс Республики Польша* [https://legislationline.org/sites/default/files/documents/f6/Polish%20CPC%201997\\_am%202003\\_en.pdf](https://legislationline.org/sites/default/files/documents/f6/Polish%20CPC%201997_am%202003_en.pdf)
- Уголовно-процессуальный кодекс Российской Федерации, 18.12.2001* [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_34481/50cc4ba5b9174a79ff3a7c8fe091ae\\_d08316c8f9/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34481/50cc4ba5b9174a79ff3a7c8fe091ae_d08316c8f9/)
- Bayles, M. D. (1987). *Principles of law*. A normative analysis, Law and philosophy library, էջ 178:
- Criminal Procedure Code of the Czech Republic, 1997* [https://sherloc.unodc.org/cld/uploads/res/document/cze/code-of-criminal-procedure-of-the-czech-republic\\_html/Code\\_of\\_Criminal\\_Procedure\\_of\\_the\\_Czech\\_Republic.pdf](https://sherloc.unodc.org/cld/uploads/res/document/cze/code-of-criminal-procedure-of-the-czech-republic_html/Code_of_Criminal_Procedure_of_the_Czech_Republic.pdf)
- Cyprus v. Turkey*, 4 Eur. H. R. Rep. 482, 537 (1982).
- Criminal Procedure Code of the French Republic, 1958*.
- Rolholm, D. J. (1996). *Justice and Constitutional Law: new sides of influence*. New York, էջ 178:
- Resolution of the Constitutional Council of France, No. 99-411, 16.06.1999*.
- Daury-Fauveau, M. (2010). *Infractions assimilées au recel*. Non-justification de ressources et facilitation de la justification de ressources fictives. Juris Classeur Pénal.
- François, T., Fenouillet D. (1996). *Droit civil. Les personnes, la famille, les incapacités*. 7e edition. Paris. Dalloz.
- Ouvrard, L. (2000). *La prostitution. Analyse juridique et choix de politique criminelle*. Paris.
- Carballo Armas, P. (2004). *La presuncion de inocencia en la jurisprudencia del Tribunal Constitucional*. Madrid.
- STC 128/1995 de 26 de julio // *Boletin Oficial del Estado*. 1995. № 200.
- Vallejo, J. (2002). *Tendencias actuales de la Jurisprudencia Constitucional Penal*. Madrid.
- Juy-Burmann, R. (2001). Il processo penale in Germania. In M. Chiavario (Ed.), *Procedure penali d'Europa* (pp. 180 et seq.). Padova.

## References

- Ispaniayi Sahmanadrakan datarani 1981 tvakani hulisi 22-i tiv 84/1981 voroshum* [Decision No. 84/1981 of July 22, 1981 of the Constitutional Court of Spain]. (In Arm.)
- Abdalati, Kh. (1995), Vzglyad na islam [A look at Islam] / per. S.I. Zhemkova. Novosibirsk* (In Rus.)
- Alekseev, I.L. (2002). Nekotorye osobennosti istoricheskoy evolyutsii i politiko-pravovogo islama i musulman v Rossiyskoy imperii k XIX – nachalu XXv.: K voprosu o vzaimovliyanii tsivilizatsionnykh logik v rossiyskoy istorii* [Some features of the Historical Evolution and Political-Legal Islam and Muslims in the Russian Empire by

- the XIX – early XX Centuries: On the question of the mutual influence of civilizational logics in Russian History // *Religiovedenie, Sankt-Peterburg, № 2* ] (In Rus.)
- Butros-Gali, B.* (1995). *Organizatsiya Obedinennykh Natsiy i prava cheloveka* [The United Nations and human rights], Moskva, informatsionnyy tsentr OON (In Rus.)
- V Kitae otmenena prezumptsiya nevinovnosti* [The presumption of innocence has been abolished in China] <https://www.rbc.ru/society/03/04/2002/5703b9e79a7947a-fa08c6dbc>(accessed: 10.05.2023) (In Rus.)
- Grazhdanskiy kodeks Frantsuzskoy Respubliki*, Kodeks Napoleona [The Civil Code of the French Republic, The Code of Napoleon] 21.03.1804 (In Rus.)
- Doklad spetsialistov o situatsii prav i svobod cheloveka v Kitae dlya Soveta Evropy* [Report of experts on the situation of human rights and freedoms in China for the Council of Europe], ES/CN.9/1999/PC/3/Dir. 83 (In Rus.)
- Zakon ob usilenii zashchity prezumptsii nevinovnosti i prav poterpevshikh, Zakon № 2000–516*, Frantsiya, 15.06.2000 [Law on Strengthening the Protection of the Presumption of innocence and the Rights of Victims, France] (In Rus.)
- Kassatsionnyy sud Frantsii, ugolovnaya palata*, 24.03.194. Byulleten resheniy kassatsionnogo suda. [Court of Cassation of France, Criminal Chamber, 24.03.194. Bulletin of decisions of the Court of Cassation] (In Rus.)
- Kodeks Rossiyskoy Federatsii ob administrativnykh pravonarusheniyakh* [Code of Administrative Offences of the Russian Federation] <https://docs.cntd.ru/document/901807667> (In Rus.)
- Konstitutsiya KNR* [Constitution of People’s Republic of China] (V redaktsii 2018g.) 04.12.1982 [https://chinalaw.center/constitutional\\_law/china\\_constitution\\_revised\\_2018\\_russian/](https://chinalaw.center/constitutional_law/china_constitution_revised_2018_russian/) (In Rus.)
- Konstitutsiya Korolevstva Ispanii* [Constitution of the Kingdom of Spain] (1978). Posol’stvo Ispanii v Rossiyskoy Federatsii <http://vivovoco.astronet.ru/VV/LAW/SPAIN.HTM> (In Rus.)
- Konstitutsiya RF* [Constitution of the Russian Federation], 12.12.1993 <http://www.constitution.ru/> (In Rus.)
- Koran* (1990), [Koran] Moskva (In Rus.)
- Krey, V.* (2007). *Sotsialnaya Psikhologiya. Nemetskoe ugolovno–protsessualnoe pravo. Osnovnye slushaniya, pravo dokazyvaniya, sudebnye resheniya, ponyatie dela, yuridicheskaya sila i sredstva pravovoy zashchity* [Social Psychology. German criminal procedure law. Main hearings, the right of proof, court decisions, the concept of the case, legal force and remedies]. Shtutgart. (In Rus.)
- Misrokov, Z.* (2002). *Osobennosti formirovaniya ugolovno–pravovoy politiki na Severnom Kavkaze* [Features of the formation of criminal law policy in the North Caucasus] // *Zakonnost. Moskva, № 10* (In Rus.)
- Mushkyan, S.V.* (1997). *Mysli, mysli, mysli...* [Thoughts, thoughts, thoughts...] // *Mysl. № 6* (In Rus.)
- Nalogovyy kodeks Rossiyskoy Federatsii* [Tax Code of the Russian Federation], 16.07.1988 [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_19671/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_19671/) (In Rus.)



- Svod zakonodatelstva FRG* [The Code of Legislation of the Federal Republic of Germany] (1999). Moskva, Nauka (In Rus.)
- Syukiyaynen, L. (2001). *Shariatskoe pravosudie. Teoreticheskie osnovy i praktika* [Sharia justice. Theoretical foundations and practice] (In Rus.)
- Ugolovno–protseessual’nyy kodeks Respubliki Pol’sha* [Code of Criminal Procedure of the Republic of Poland][https://legislationline.org/sites/default/files/documents/f6/Polish%20CPC%201997\\_am%202003\\_en.pdf](https://legislationline.org/sites/default/files/documents/f6/Polish%20CPC%201997_am%202003_en.pdf) (In Rus.)
- Ugolovno–protseessualnyy kodeks Rossiyskoy Federatsii*[Criminal procedure code of the Russian Federation], 18.12.2001
- [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_34481/50cc4ba5b9174a79ff3a7c8fe091aed08316c8f9/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34481/50cc4ba5b9174a79ff3a7c8fe091aed08316c8f9/) (In Rus.)
- Bayles, M. D. (1987). *Principles of law*. A normative analysis, Law and philosophy library (In Eng.)
- Criminal Procedure Code of the French Republic*, 1958. (In Eng.)
- Cyprus v. Turkey, 4 Eur. H. R. Rep. 482, 537 (1982). (In Eng.)
- Criminal Procedure Code of the Czech Republic, 1997* [https://sherloc.unodc.org/cld/uploads/res/document/cze/code-of-criminal-procedure-of-the-czech-republic\\_html/Code\\_of\\_Criminal\\_Procedure\\_of\\_the\\_Czech\\_Republic.pdf](https://sherloc.unodc.org/cld/uploads/res/document/cze/code-of-criminal-procedure-of-the-czech-republic_html/Code_of_Criminal_Procedure_of_the_Czech_Republic.pdf) (In Eng.)
- Rolholm, D. J. (1996). *Justice and Constitutional Law: new sides of influence*. New York, էջ 178 (In Eng.)
- Resolution of the Constitutional Council of France*, No. 99–411, 16.06.1999. (In Eng.)
- Daury–Fauveau, M. (2010). *Infractions assimilées au recel*. Non–justification de ressources et facilitation de la justification de ressources fictives. Juris Classeur Pénal. [Offences assimilated to concealment. Non–justification of resources and facilitation of the justification of fictitious resources] (in Fr.)
- François, T., Fenouillet D. (1996). *Droit civil. Les personnes, la famille, les incapacités*. 7e edition. Paris. Dalloz. [Civil law. People, family, disabilities. 7th edition] (in Fr.)
- Ouvrard, L. (2000). *La prostitution. Analyse juridique et choix de politique criminelle*. Paris. [Prostitution. Legal analysis and choice of criminal policy] (in Fr.)
- Carballo Armas, P. (2004). *La presuncion de inocencia en la jurisprudencia del Tribunal Constitucional*. Madrid. [The presumption of innocence in the jurisprudence of the Constitutional Court] (In Sp.)
- STC 128/1995 de 26 de julio // *Boletin Oficial del Estado*. 1995. № 200. [STC 128/1995 of July 26 // Official State Bulletin. 1995. № 200] (In Sp.)
- Vallejo, J. (2002). *Tendencias actuales de la Jurisprudencia Constitucional Penal*. Madrid. [Current Trends in Criminal Constitutional Jurisprudence] (In Sp.)
- Juy–Burmam, R. (2001). Il processo penale in Germania. In M. Chiavario (Ed.), *Procedure penali d’Europa* (pp. 180 et seq.). Padova. [The criminal trial in Germany. In M. Chiavario (Ed.), *Criminal Procedures of Europe* (pp. 180 et seq.). Padua] (in It.)

**Анна Оганесян**

*Ведущий специалист отдела анализа индивидуальных обращений  
Правового консультативного управления Конституционного суда РА,  
Соискатель кафедры права Европейского университета  
Эл. адрес: Anna.hovhannisyan2210@gmail.com*

## **ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ В НАЦИОНАЛЬНОЙ ПРАВОВОЙ СИСТЕМЕ: МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ПРАВОВОЙ ФИКСАЦИИ**

Данная статья посвящена закреплению принципа презумпции невиновности в правовых системах отдельных государств. В частности, делается ссылка на закрепление принципа презумпции невиновности в законодательстве Российской Федерации, Королевства Испании, Французской Республики, ряда мусульманских стран, Китайской Народной Республики и других стран. Цель изучения темы – осветить действие принципа презумпции невиновности в правовых системах отдельных государств, изучить применимость этого принципа в этих странах, выделить страны, где принцип презумпции невиновности не действует, провести сравнительный анализ и в результате определить основную сущность презумпции невиновности и область её применения по отдельным правовым системам государств. Результаты исследования дадут более детальное представление об определении этого принципа в отдельных государствах, в результате чего мы сможем выделить недостатки и преимущества существующих нормативных актов о нем в отдельных государствах и локализовать их во внутригосударственной правовой системе Республики Армения.

**Ключевые слова:** Презумпция невиновности, правовая система, зарубежные страны, правовые системы отдельных государств.

**Anna Hovhannisyan**

*Leading specialist of the Individual Complaints Analysis Division  
in Legal Advisory Department of the Constitutional Court of the Republic of  
Armenia, Ph.D. student of Law at the European University  
Email: Anna.hovhannisyan2210@gmail.com*

## **PRESUMPTION OF INNOCENCE IN THE NATIONAL LEGAL SYSTEM: INTERNATIONAL EXPERIENCE OF LEGAL FIXATION**

This article is dedicated to stipulating the principle of presumption of innocence in the legal systems of individual states. In particular, reference is made to fixing the principle of presumption of innocence in the legislation of the Russian Federation, the Kingdom of Spain, the French Republic, a number of Muslim countries, the People's Republic of China and other countries. The purpose of the study of the topic is to highlight the operation of the principle of the presumption

of innocence in the legal systems of individual states, to study the applicability of this principle in those countries, to spot the countries where the principle of the presumption of innocence does not work, to perform a comparative analysis and as a result to define the main essence of the presumption of innocence and the field of its application according to internal legal systems of certain states. The results of the study will provide a more detailed understanding of the determination of this principle in certain states, as a result of which we will be able to highlight the shortcomings and advantages of the existing regulations regarding it in individual states and localize them in the domestic legal system of the Republic of Armenia.

**Key words:** Presumption of innocence, legal system, foreign countries, legal systems of individual states.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. ապրիլի 7-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. ապրիլի 12-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. մայիսի 10-ին: